



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԻԻ 49

16/29 ՅՈՒՆԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի † Յունիս 16/29 † Թիւ 49

տառադրուած

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շարունակութիւն)

Անա աշտպիսի ՄԵՄ անձնաւորութիւն մըն է որ դարձի բերաւ, որ դիւթեց Հայոց աշխարհը, որ գերազանցօրէն խանդավառեց անոր ազգաճախութիւնը, որ թափանցանայ դրոշմեց ազգին սրտին մէջ անջնջելի՝ իր յիշատակը, իր սէրը, պիտի ըսէի՝ իր պաշտամունքը: Անա ինչո՞ւ համար հայ ազգը սիրտնարն է կրած իր Ս. Գրիգորին, և դարերու տարիներու թաւալումը չկարողացաւ՝ ո՛չ թէ խլել հանել անոր սրտէն այդ երջանկաւէտ, բուռն, ոչ նուազ քան ազգին բնական յատկութիւն մը դարձած այդ սէրը. այլ ուժգին հոգմայ նման աւելի հրաշքեց և աճեցուց զայն հնոցավառ բոցերով:

Ո՛չ միայն Այրարատ Երկրպագու կը խմնարի պատմութեան ու Եկեղեցւոյ այս փառապատկ Դիւցազնոյն առջև. այլ ս մրցջ Արեւելք և Արեւմուտք հիացած է Անոր մեծութեան և գովարտն պաշտօնագիր, Բազմաշարժար և սքանչելագործ մեր Հայրապետը կը տօնուի մինչև ի

սիրելու աշխարհի, ի մէջ ազգաց և ազանց որ կը հպատակին Առաքելապետի Աթոռոյն անսխալ վարդապետութեան: Անոր սրբանուէր նշխարը, որոյ հրաշալի գիւտն է զոր գլխաւոր ածն հաստատած է մեր Եկեղեցին՝ իբրեւ իր կորուսեալ միակ գանձուն, արքայական մարդարտին զիւտը, այս սուրբ նշխարները, կ'ըսեմ, նախանձախնդիր ելեւելով իրարմէ ժառանգած են ազգիւր և ոսկեղբորուզ պահարաններու մէջ զհետեւած՝ ի յարգութիւն զրա՞ծ են ժողովրդաց:

Բնական զգացում մ'է ուրեմն Հայուն սէրը, հպարտութիւնը, խանդն ու եռանդը իր Ս. Գրիգորին համար, որուն կը պարտի իր լոյս Հաւատքը, իր կրթութիւնը, իր գոյութիւնը: Այդ հաւատքը որ անոր արեան մէջ մտաւ, հոգւոյն էութեանը մէջ թափանցեց, այդ հաւատքը եղաւ որ ծլեցուց անոր սրտէն ամենէն աշնիւ բարեմասնութիւնները, և հոգիէն ամենէն վսեմ խորհուրդները: Արիացուց զայն իր ոստիներուն, սխերիմ թշնամիներուն դէմ: Դրոնց դէմ մաքառեցաւ զարերու ընթացքին մէջ, անդադար և արիաբար, զիւցազններ ծնանելով ինկած նահապետներու արիւնէն: Միշտ յարձակում կրած, միշտ խոշտանգուած բարբարոսներու վտճակներէն, միշտ հալածուած ու ցրուած, միակ ապսւճն ունեցաւ իր Ս. Հաւատքը, մրդկալից ծովու վրայ իբրեւ անաղօտ աստղ փրկութեան: Եւ անպիտան պետութիւններու վայրենի գոչւոյններն, հուրն ու սուրը անզօր մնացին զինք դրդուեցնելու իր Ս. Հաւատքէն: Գրիգորի Աստուածաշօշափ Աջը ցանած էր այս երկնաւոր հուանը: Ապա անկէ ծլեցաւ ազգային սրբազան մատենագրութիւնը, պերճ, ոսկեղէն, զարմանալի՝ աննպաստ պարագայից մէջ իսկ. որ հայ գեղեցիկ լեզուին և հիանալի շարադասութեան նախանձախնդիր սեանդապահ և բարգաւաճողն եղած է: Դր ցարդ ընդհանուր մատենագրութեան իսկ ծառայութիւններ կը մատուցանէ, հանելով իր գանձէն ուրիշներու համար ընդ միշտ կորսուած անդամանդներ: Հետեւաբար պահպանած է տն նաեւ ազգային բարուց, սովորութեանց, աւանդութեանց մանրամասնութիւնները: Պահպանեց անոր քաղաքակրթութիւնը, Արեւելքի մէջ առաջնակարգ ժողովուրդ մ'ըրաւ զայն, միշտ յառաջադէմ, միշտ յաջողակ՝ ամէն տեղ և ամէն բանի մէջ, միշտ մրցող և նկրտող բարձրագոյն գաղափարականի: Առանց Ս. Գրիգորի իմաստուն գործունէութեան, այսօր Հայաստանը սոսկ պատմական անուն մը միայն պիտի ըլլար, և հայ ժողովուրդը իր սահմանակից բազմաթիւ մարած ազգութիւններուն աւելցուած: Ս. Գրիգոր պահպանեց հայ ազգը: Անոր շնորհիւն է որ հայ երկնակամարը զարդարուեցաւ անմահ աստղներով որ կը յորջորջուին Սահակ Մեարոպ, Մեծն Ներսէս, Նարեկացի, Ծնորձալի, Լամբրոնացի, Կոմ Վարդան, Վահան, Ղեւոնդ, Խոսրովիգուխտ, Սանդուխտ, Շուշան, և այլ թիւրաւորներ:

Ահաւասիկ Ս. Գրիգորի նշանակութիւնը հայ ոսկեկիր մատենանէ.

րու մէջ : Նա աւելի է քան հայր մը գորովագութ , աւելի քան աշխարհակալ մը համբաւաւոր , աւելի քան իմաստուն մը տիեզերաշուշակ , աւելի քան սուրբ մը բարեխօս-պաշտպան և արագահաս : Անոր քաղցր յիշատակը անմահ պիտի տեսէ դարուց ի դարս , ցվերջ ժամանակաց :

Հնադարեան աւանդութիւնը դարէ ի դար արձագանգեց թէ Ս . Գրիգոր Լուսաւորիչ , նորադարձ Տրդատ արքային հետ մեծ ու չքով և հանդերձանօք գնաց ի Հռովմ , ի տեսութիւն Ս . Սեղբեստրոս Քահանայապետի , Յաջորդի Ս . Պետրոս Առաքելապետի , և մեծին Կոստանդիանոսի նորադարձ Կայսեր : Հոն Ս . Գրիգոր իր նորաշատատ եկեղեցին հաղորդակից պիտի ընէր հոնց Հռովմայ , և հաստատութիւն պիտի առնուր անկէ՝ իբրեւ անբաժանելի մասն ընդհանուր միութեան : Մեր ընտիր մատենագիրներն , ոսկեղէն լիզուաւ Հայոց , դրուագներն աւանդած են այս չնշխարհիկ միջադէպին , դրուատիք և փառապատկան յորինելով այս մեծամեծ անձնաւորութիւններու հանդիպումին , քնարերգական հիւստեամներով , մեծադուրդ հանդիսութիւններով , բանաստեղծական առաւելարանութեամբ : Մեր եկեղեցական երգոց , յիշատակութեանց , մատենաներուն և ընդհանուր արքայան մատենադրութեան մէջ ոչ անցած է և նուիրագործուած : Արտաքին պատմիչներու քով ալ հաստատութիւն գտած է այս աւանդութիւնը : Կր դանուին նաեւ որեւք ուրեք արուեստագիտական և հնագիտական հասակատարներ որ այս նշանաւոր դէպքը կ'աւանդեն և կը վաւերացնեն կարծես , օրինակի համար Սապնայի , որ մօտ է Հռովմի , Սորակտիոն հոյակապ լերան վրայի հին մենաստանին մէջ շատ հին որմանկար մը կայ որ կը ներկայացնէ այս երջանիկ հանդիպումը երկու մեծ Հայրապետներու և թագաւորներու : Դարեր անցան ու դարեր , և ո՛չ ոք երբեք տարակուսեցաւ այս դէպքին իրականութեան վրայ : Սակայն պատմութեան քննադատութիւնը իր կարգերեայ ձեռքով պրպտեց այս դէպքն ու մանաւանդ որ ան դարմանալի երեւոյթ մը կ'ընծայէր , իր աննշխարհիկ և գրեթէ անհաւատալի պարագաներով , ինչպէս պատմուած է յոմանց : Եզոն ուրեմն քննադատներ որոնք բացէ ի բաց մերժեցին զայն , մանաւանդ այնպիսիներն , որոնք անխոստովանելի թագուն խորհուրդներէ կ'առաջնորդուէին այս մերժումին , ապա այնուհետեւ քմածին և նպատակաւոր հետեւութիւններ քաղելու համար անսի , եկեղեցեաց անկախութեան , իբրեւ թէ ինքնակաց և աւետարանական վարդապետութիւն մը կախումն ունենայ Ս . Գրիգորի այս ճամբորդութեան մասնակի դէպքին : Ս . Գրիգոր Լուսաւորիչ Հռովմ գտցած ըլլայ կամ ո՛չ , այս դէպքը ճամբորտ ըլլայ կամ չերիւրեալ , Ս . Պետրոսի Յաջորդը միշտ Գլուխ է ընդհանուր Եկեղեցւոյ , ինչպէս ըսած և բրած է Քրիստոս Տէրն մեր և խոստովանած են ընդհանուր տիեզերաց ուղղափառ և ողջամիտ Հայրապետները , նուիրապետու-

թիւնները, ազգք և ազինք, Արեւելեան յամառ կրքերը և սին իմաստակութիւնը կամ արեւմտեան՝ սափասուած փիլիսոփայութիւնը չեն որ պիտի խախտեն այս ճշմարտութիւնը: Սակայն և այնպէս դարերու զրեթէ հաւատարիք դարձած աւանդութիւն մը բացէ ի բաց մերժել չատ դիւրին բան չէ. սակայ յաւակնութիւն մեծ է: Քանիցս չպատահեցաւ որ քննադատի մը իբրեւ անընդունելի մերժած և կարծես փաստացի մերժած մէջ դէպքը, հաստատուեցաւ ի վերջոյ նոր նոր գիւտերով հողերու, դաւաճաներու, ներքին խաւերու մէջէն ելած բնկորներով: Մերկացնենք այդ դէպքը իր բոլոր չափազանցութիւններէն, յապաւենք իր ամէն աւելորդ անբնական անճշմարտանման զարդերէն — այո՛, պէտք է ընել զայս. արդէն արեւելեան, մանաւանդ հայ բնաւորութիւնը ամեն բանի մէջ զերազրականի կը հակի: Եւ, եթէ կ'ուզէք — և ո՛չ անիրաււանք, — արքայական չքեղութիւնները, մեծազորդ բանակները, եւն. չատ վերջը յերկրիայ դաշանց թուղթերը, ասոնք ալ կտրենք հանենք, իբր աւելորդ պերճութիւն. դէպքը վերածենք իր պարզ բացատրութեան: — Ս. Գրիգոր Լուսաւորչին Հռովմ երթալը, նոյն իսկ Տրդատ թաղաւորին ընկերութեամբ. — ասոր մէջ անկարելիութիւն չկայ:

Տրդատ և Գրիգոր Հռովմ տարիներ անցուցած էին. հեռաւոր ճամբորդութիւններու երկուքն ալ վարժուած. հոն արտակիցներ ունէին, Տրդատ՝ կայսերական ընտանեաց մէջ և յազնուական դասուն, Գրիգոր՝ Քրիստոնէիք ընկերութեան մէջ: Հիմա որ Հայաստան նոր դարձած էր ի Քրիստոնէութիւն, և Կոստանդիանոս և իրեն հետ Հռովմէական Պետութիւնը քրիստոնեայ եղած էր և Լապարիոնը՝ Ս. Խաչի դրօշը իր յաւիտենական մակագրութեամբ — «ԱՅՍՈՒ ՅԱՆԹԵՍ» — չքեղ կը ծածկէր Կապիտոլիոնի վրայ, ո՛ր, ինչեք ունէին՝ այս Մեծերը, իրարու իսելիք: Եւ Հայոց արքայն պէտք ունէր նոր դաշինք կուել Հռովմայ հետ, որովհետեւ Հոյք Մաքսիմիանոս Տալայի դէմ վստահաւոր կը լուծու և զոյն ի պարտութիւն մատնած էին: — Ուստի այս դէպքը մերժելու համար, ո՛րչափ բան պէտք է մերժել միանգամայն. ժամանակներու, անձերու և դէպքերու պատշաճութիւն, դարաւոր աւանդութիւն, գրեթէ ժամանակակից նշանաւոր պատմիչներ, քզգային և օտար (Ագաթանգ. Խորեն, Եղիշէ, եւն. Եւսեբիոս, Սոզոմենոս, եւն.): Նոյնպէս արուեստի գործոց յիշատակութիւնք. եկեղեցական ծէսերու իսկ նշանակութիւն: Կը նախընտրէի, հաւանութեամբ իսկ քննադատութեան և դեռ չատ մեծ քննադատներու հետ (ինչպէս Գաթլըրճեան մը), հաւատալ այս աւանդութեան, քան թէ այս մերժողական անմիտ աւերները սփռել չորս դին — և այս՝ ի չնորս մանաւանդ անոնց որոնք կամ իրենց անիրաւ բաժանումը կ'ուզեն սրահոյունել ամէն զոհողութեամբ, նաեւ ի նուիրականս, և կա՛մ կ'ուզեն լռեցնել իրենց խղճը որ ցանգ կը խայթէ: Բայց մենք զիջողութիւն մըն ալ պիտի ընենք և պիտի ըսենք.

Նոյն իսկ եթէ ո՛ր և է դրութեամբ անհնարին լլլար Ս. Գրիգոր Լուսաւորչի Հռովմ՝ ի յարգանս և ի հպատակութիւն Ս. Պետրոսի Յաջորդին, գացած լլլալուն զէպօք իրրե պատմական և ստոյգ փաստարանել, սակայն և այնպէս տաով բնաւ չէր քայքայուէր՝ պատմութեան մէջ մինչև հիմա այս գէպքին վերադրուած աստուածաբանական դիտումը, և բնաւ չէին օգտուիր այս դիտումը մերժելու համար պատմութեան գէպքն ալ մերժողները, մանաւանդ թէ, հակառակ անոնց նպատակին, բացարձակապէս կը հաստատուէր անոր նշանակութիւնը, այսինքն՝ Հռովմայ Աթոռոյն զլիաւորութիւնը և Հայ Եկեղեցւոյ միա՛յն անոր հետ միութեան մէջ ուղղափառութիւնը: Եւ ի՞նչպէս, ահաւասիկ, Ամէն հին աւանդութիւն, որչափ ի հնութեան գնդ յերկրուած լլլայ, ա՛յն ժամանակի ժողովուրդներուն զգալու, մտածելու, հաստատուելու կերպը կը մտանանչէ: Զշմարտութեան կամ վարդապետութեան մը իրր սնովիճելի նշանակ աւելցուած մըն է այն ընդհանուր աւանդութիւնը, հոգեբանական անժրխակի երեւոյթ մըն է: Հին բացարձակ վէպերէն անգամ հաւատալեաց և սովորութիւններու յօրինուած մը կը հիւստի: Եթէ այդպէս չլլար, այս գէպքերն ի սկզբան անդ իրրե մտացածին դառանցանք մերժուած կ'լլային ժողովուրդներէն: Պէտք չէ հիները պարզապէս անուպայ և ամարդի կարծել: Ուստի պէտք է անպատճառ խոստովանիլ թէ այս գեղեցիկ և իմաստալից գէպքը, նոյն իսկ եթէ՝ — սա անկարելին, — յերկրուած լլլայ, միշտ սակայն անկեղծ բացատրութիւն մըն է Հայոց հին ուղղափառ հաւատքին, որոնք յայնժամու ընդհանուր Եկեղեցւոյն հետ կը հաւատային թէ Հռովմայ Քահանայապետը Գլուխ է Ս. Եկեղեցւոյ, Փոխանորդ Քրիստոսի, Յաջորդ Ս. Պետրոսի, Գերագոյն Արքեպիսկոպոս և Դատաւոր, «որու քերհով կը խօսի Պետրոս», «որ երբ կը խօսի դասը կ'աւարջի», որու կը դիմեն անխտիր՝ Աթանասներ, Ոսկեբերաններ, Եփրեմներ, Որոգինեաններ, Գրիգոր Լուսաւորիչներ, տղգեր, դարեր, սփեղերք, որմէ կ'աւանդեն հաստատութիւն իր եղբարս, Եկեղեցիք ամենայն, առանց որոյ նշանակութիւն չունին՝ որքան ալ հին լլլան, և չեն կրնար անազարտ պահպանել վարդապետութիւնը:

Ահա այս է անժխտելի իմաստը և դիտումը այս ընկալեալ դարուստ աւանդութեան:

Ամէն սրբապիղծ ձեռք չկրնար քանդել սրբութիւնները:

(Շարունակելի)

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՅԻՆ

ՊԵՌՍԻ Ժ.Ի

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆ ԱՌ ԱՄԵՆԱՊ. ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐ

Նոր չրջանի մը մէջ մտաւ շուրջ երկու տարիէ ի վեր Հայ Կաթողիկէ Հասարակութիւնը խռովող, տանջող, նուաճողացող և պառակտող ցաւալի խնդիրը։ Օրէ օր, ժամէ ժամ, սրաւ սրովումով, սկիւտոյց ի վատական, կ'ակնկալուէր պատգամ մը. պատգամ մը՝ Աստուծոյ Որդւոյն Փոխանորդէն, Պետրոսի Յաջորդէն, Եկեղեցւոյ Գլուխէն ու անսխալ վարդապետէն։ Եւ ահա խօսեցաւ Նա՝ որոյ իրաւունք է խօսիլ որուն՝ պատկառոտ և հլու, կ'սենկնդրէ տիեզերք։ Կը խօսի Նա, երբեմն մեղի և հեզահամբոյր, ինչպէս խօսեցաւ Տէր Եղիայի, ի Թափօր և ի Կարմէլ, ի մեղմաշունչ հոգի խաղաղութեան. և երբեմն կ'ի խօսի Նա, ահեղասաստ և չանթահարող, ինչպէս խօսեցաւ Տէր Մովսիսի ի Սինա, միզով և փայլալու և կայծակնացայտ և ի բարբառ փողոյ։ Այսպէս Բրիտանոս, քաւիչ և ներող, կ'արտաբերէր. «թողտի՛ն ինձի քու մեղքերդ»։ Եւ կը դռնար. «Վա՛յ ձեզ մեծասանց»։ Դարեր լսեցին այս հեղ և ահեղ բարբառ. թագակիր գլուխներու վրայէն անցաւ այս օրհնութիւնը կամ անէծքը. կանգնեց կամ փչեց թագեր ու դահեր։ Մինչեւ ցվերջ ժամանակաց պիտի հնուադի այս երկնաւոր ձայնը։ «Այս վիմին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցիս. — Ինչ որ պիտի կապես երկրի վրայ, կապուած պիտի ըլլայ երկրին վրայ. — Դու պիտի դառնաս ու պիտի հաստատես քու եղբարդդ. — Արածե՛ր իմ ոչխարներս»։

Եւ ահա երեք հարիւր միլիոն ճշմարիտ հաւատացեալ Կաթողիկէից գլուխները կը ծռին Վատիկանու Վեհափառ Ծերունւոյն առջեւ, երբ կը խօսի Նա, յանուն Աստուծոյ։ Այս պատգամին դէմ չկայ ընդդիմախօսութիւն։ Կարկեցան լեզուները գիտնականներու, սքեմաւորներու, ինքնակալներու. կա՛մ անիծուեցան ու մաշեցան, կա՛մ հպատակեցան ու փրկուեցան։ Պատմութեան ամէն էջեր օրինակելի դէպքերով վրէն։ Զգօրներ իրեն ձայնին դէմ՝ ո՛չ խմտտութիւն, ո՛չ բարուրանք, ո՛չ ոյժ, ո՛չ սաստ, ո՛չ խոտտում, ո՛չ մոմոնայ. «Այսօր, երբ անոր ձայնը լսելու ըլլաք, մի՛ խաւացունե՛ք ձեր սիրտերդ»։ Խոտապարանոց հրեայք միայն «նոյն զականցս իւրեանց» արդարութեան ու ճշմարտութեան ձայնին։

Արդ մեզի համար խօսեցաւ այս հոգեշունչ պատգամը. և մեզի, Հայ Կաթողիկէից համար խօսեցաւ։ Այնչափ ժամանակէ ի վեր կը կրկնուէր թէ Ս. Բոհանայապետը դեռ բան մը չըսաւ. դեռ չվճռեց. հետեւորար ամէն ոք ինքզինքը ազատ կ'ենթադրէր։ Արդ, քանի որ հիմա խօսեցաւ, յայտնապէս, հանդիսապէս, թէեւ քիչ մը դառնապէս, պէտք է սակայն

լսենք իր հայրական ձայնը, խոնարհութեամբ, հլու թեամբ, անկեղծութեամբ, իբրեւ ճշմարիտ որդիք, եթէ պարտապան ենք, ցաւինք և զգաստանանք, եթէ անշեղ, ինքանք և յարասեւենք: «Այսօր, երբ Անոր ձայնը շնորհ ըրաւ, մի՛ խստացունե՛ք ձեր սիրտերը»: Երկինք է որ կը խօսի ի նմա. Պետրոս Առաքեալն է որ կը խօսի Անոր բարնով: «Որ ձեզ շեւ, ինձ շեւ» ըսաւ Քրիստոս: — «Էն՛չ, որդեակ, խոսաւ Հօր քո»:

Քահանայապետական այս կարեւոր նամակին իմաստը ամենուն դիւրամտաշէլի ընկելու մասք, կը փափաքինք փոքր ի շատէ քննել անոր պարունակութիւնը, ի վեր հանել անոր ոգին և մասնանշել անոր էական տրամադրութիւնները:

1. Գիտելի է որ Ս. Քահանայապետը իւր այս նամակը չորկեր երկրորդական միջոցներով, ինչպէս այսպիսի պարագայից մէջ կը սովորի. այլ ուղղակի և անընդմիջապէս կ'առաքէ դէպ յանուն Ամենապ. Կաթողիկոսի, զոր ինքնիշխանօրէն և հակառակ ազէս խժրժանաց, առանց այլեւայլի կ'անուանէ Պատրիարք, ցոյց տալու համար այս բառին բոլորովին եկեղեցական առումը, ինչպէս իր փառապանծ նախորդը, Բենեդիկտոս ԺԴ. նոյն տիտղոսը շնորհած էր Աբրահամ Պետրոս Ա. ի, և զոր անընդհատ գործածեցին իր յաջորդները: Եւ եղբայր կ'անուանէ այս մեր հոգեւոր Պետր. և աղնիւ է նաեւ ամականը՝ Պատրիարք Եղբայր: Որպիսի՜ տարբերութիւն ոճոյ, համեմատութեամբ այն բերաններուն և գրիչներուն, որոնք ամօթալի մակդիրները ծովացուցին: «Դա՛ք զիս կ'անարգե՛ք: Ես ին՝ փառքս չեմ փնտեր. կա՛յ մեկը որ կը փնտռէ ու կը դասէ... Կ' Հայր որ փառաւորէ զիս»:

2. Ի սկզբան անդ նամակին կը հաստատէ թէ Հայոց Եկեղեցին, ներկայ դժնդակ վիճակին և պատահած չարագէտ վարմունքներուն առթիւ կը պահանջէ որ Ան, որու վրայ կը ծանրանան «Ամեն Եկեղեցիներու հոգերը», դարձնէ նաեւ Հայ Կաթողիկոսացոյ վրայ իր ինամոտ աչքերը, աչքերը միայն. զանոնք միշտ յառած ունի. այլ և Քահանայապետական, այսինքն Քրիստոսի Փոխանորդի լիազօր և աշխարհածաւալ ու անդիմադարձ գերագոյն Իշխանութեան գործածութիւնը: Ինչ որ մինչեւ հիմայ բարաւ, խրատ էր հայրական, զեկոյց և ազգաբարձրութիւն: Իսկ հիմայ պիտի գործածէ գերագոյն նուիրապետի իրաւասութիւնը: «Բան Տեսա՞ն հասա՞ն քան զամենայն սուր երկայրի»:

3. Կը յարէ թէ ըսած և տեղեկացած է՝ բնականաբար յիշին, մանրամասնօրէն, մինչեւ իսկ համոզուելով իրաց վիճակին վրայ, պէտք զգացեր է գործածելու Հովուապետական իրաւաբանութիւնը: Արդէն ուրիշ կերպ ենթադրել կարելի չէ. քանզի տղայական է ամենեւին կարծել կամ կեղծել թէ ամէն օր աշխարհիս վրայի հարիւրաւոր միլիոն Կաթողիկէ ազգաբնակչութեանց, և այլն՝ ամենէն քաղաքակիրթ ազգերու, զոր օրի-

նանք Զորանոցի, Աւսարիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ, Միացեալ Նահանգաց
են, ամենածնոյ, և բազմակնճիւռն գործերը ուսումնասիրող, խափանցող,
դատող և վճռող և ընդունելի եղող — և նոյն իսկ երբեմն մեծ պետու-
թեանց միջեւ իրաւարարի պաշտօնը կատարող — Քահանայապետ, ափ մը
Հայ Ժողովուրդեան գործերը խնդիրները չեւարճնայ հասկնալ, խաբարի, չու-
ղէ լուստարութիւն, և որ յուսկոյն է, խնայեալ ըլլալով վճիռներ տայ —
ասիկայ հրեշտային ենթադրութիւն է, անվայել՝ ո՛չ թէ Կաթողիկէ, այլ
լոկ արամարան մարդու անունին։ Այս անհեթեթ թարուարանքը գործա-
ծած են միշտ անուղղայ հերետիկոսներն։

4. Այլ այս գործերն իրեն մեծ ցաւ պատճառելու բնոյթն ունին
եղեր։ Քանզի Հայ Կաթողիկեաներէ ոմանք, բնաւ չիշխով կամ բոլո-
րովին մոռնալով Կաթողիկէ դատանութիւնը, կրօնական սկզբունքները,
իրենց կիրքերուն ու մարտառմին մէջ հասեր են մեծ յանդգնութեան
ու յամառութեան, և այս յանդգն ու յամառ մարդիկ գործեր են «ընդդէմ
այս Առաքելական Աքոնոյ», այս է՝ Ս. Պետրոսի Քրիստոսահաստատ Գա-
հուն դէմ։ Ընչպէս կրնայ ըլլալ աս, քանի որ այս մարդիկը շարունակ կը
յեղյեղէին թէ՛ յարկադիր և հնազանդ որդիք են Սրբազան Հօր, Ս. Գահուն,
թէ՛ բնաւ Հռովմայ դէմ բան չունին և ճշմարիտ ու անկեղծ Կաթողիկեայք
են։ Ահա պատճառը, ի մէջ այլոց՝ զորս ի ստորեւ կը դնէ։ Քանի որ «Քու
(Պատրիարքին) հոգեւոր իշխանութեան դէմ գործեցին, նովին գործով և
Սուրբեկանն Աթոռոյ դէմ զինեցան։ «Ուրովհետեւ փոքրիկներէն մեկուն
ըրիֆ, ինծի ըրած եղաք» ըսաւ և ի դատաստանի պիտի ըսէ Յիսուս։ Եւ
ըսաւ. «Ով ո՞ր զանգ կ'անարգէ, զիս կ'անարգէ»։


5. Հիմա կ'անցնի Սրբազանը թուարկելու այս գործերը, ցոյց տա-
լու համար թէ իտարուած չէ, այլ քաջ գիտնալով կր խօսի ու կը վճռէ,
և իր տուած վճռոյն քառախան պատճառ կը սեպէ իր ներկայացուցածները։
ԱՌԱՋԻՆ ծանր յանցանք կը վերադրէ թէ, վերոյիշեալ յանդուգն և յա-
մառները «մարհեցան, կ'ըսէ, գեղձ իրենց Հովիւը, անարգանօք եւ թշնա-
ւանօք ծածկել»։ Բազմակողմանի և անթիւ եղած են յերաւի նախատինք-
ները. հնար է՝ չէ եղած ո՛ր եւ իցէ ազգի մէջ Կրօնական Նուիրապէս մը, որ
այսքան ծանրութեամբ, պէսպիսութեամբ, տեւողութեամբ, յամառու-
թեամբ, լրբութեամբ իսկ նախատուած ըլլայ անճնապէս, բերանա-
ցի, գրաւոր եղանակաւ՝ հեղեղանման, գործերով ամօթալի։ Ո՛վ Կա-
թողիկէ կրօնք, ի՞նչ հարուած ստացար քու զաւանկներէդ, որոնք
խաղաղասկեցին զքեզ ազգաց և ազանց մէջ, մինչեւ ցնդիւնս
հեթանոսաց։ Սրբազանը չզիջանիր այս նողկալի արարքները թուե-
լու, որոնք իր վերքերը պիտի նորոգէին։ Հոգեւոր Հովիւը նախա-
տեցին. թերթեր լեցնելով հայհոյութեամբք. իր պատուանունները ինք-
նիշխանութեամբ զլանալով. Գերապայադառ տիազօտ յատկացնելով օրի-
նաւոր Կաթողիկոսի մը, այլ շարունակ պարզ մականունը միայն յորջոր-

ջելով, իրբեւ սոսկական սինչքոր մէկուն. Պատարագներու մէջ անոր անուան յիշատակութիւնը խափանելով, ազմկալից յոյցերով. Ս. Սեղանի վրայ քանոնայից յարաւարակելով, հովուական Կոնդակները խլելով, պատուելով, այրելով, քարոշիկութեան իյնալովը, Կարողիկոսութեան անկումն ալ իր անհրաժեշտարար եղեալ գործ չըջարեցին. թերթերու մէջ երկար և անլի յօդուածներով պատճառադրանելով, պաշտօնական տպուած հրաւիրողիւնքու մէջ հրատարակելով. . . շաւ եւ է լուի այս անորբելի ամօթները: Եւ ասոնք զիրենք ճշմարիտ Կաթողիկէ Կանուանէին: Քրիստոսի Փօխանորդը սակայն չէ խաբուած: — ԵՐԿՐՈՐԴ ծանր յանցանք կը վերադրէ տրագան պաշտանն գործադրութեան խափանելը: Դրեթէ առաջին օրէն ի վեր այս ընդգիծադրութիւններու պատճառաւ Կաթողիկոսական պաշտօնին գործադրութիւնը խափանուեցաւ. մանաւանդ երբ թուրք իշխանութեան զիմելով Բաթրիգութեան ձգեցին, հագեւոր պաշտանն զիստոր գործերէն չատր խափանուեցաւ: Իսկ իրենք միշտ կատարեալ obstruction լին. հրամաններ զրկեցին թէ ո՛չ ինք ո՛չ իր փոխանորդը չալիսի կատարեն պաշտոն. . . եկեղեցիներու մէջ. Եպիսկոպոսները նոյնպէս արգիլեցին և ցարդ կը շարունակեն արգելել կամ արգիլել տալ՝ գաւառներու մէջ. Եպիսկոպոսը քանաններու պէս ընդունելու կառավարական հրամաններ հանել տուին: Դեռ նորերս, վաղուական ըսուած ժողովոյն մէջ. Արքեպիսկոպոս Փօխանորդի Սրբազան պաշտամունքին գործադրութիւնը, ինչպէ՛, է ամուսնական ազատութեան հաստատութիւնը, քաղաքականութեան և հրապարակաւ արգիլեցին, իւրացնելով այն իշխանութիւնը, և գրելով Գումգարուի Պատրիարքարանին թէ այդ Եպիսկոպոսը պաշտօնական հանգամանք մը չունի. . . մինչդեռ այս հանգամանքը իրեն տուած է Եկեղեցւոյ Իշխանը՝ Սրբազան Քանանայապետ: Եւ կը շարունակեն խափարել ըսելով թէ եկեղեցական գործոց չին խառնուիր!! . . . Դեռ շատ օրինակներ կան, բայց չձանձրացնենք: — ԵՐԿՐՈՐԴ ծանր յանցանք կը վերադրէ իր պաշտօնական բնակատեան վտարել, Իրենք վտարեցին քանդի իրենք վտարել տուին, զիմելով կառավարութեան Սոսկական մէկուն մը հանդէպ նոյն իսկ այս տեսակ վտարման գործողութիւն մը ծանր արարք պիտի նկատուէր: Իսկ մնաց Կաթողիկոսի մը հաւմար: Եւ այնպիսի բնակարանէ մը, որ յատկապէս չինուած է հոգեւոր Պեթի բնակութեան համար. բարերարին աս յայտնի դիտաւորութիւնն ու կամքն ալ սանակոխ լին: Յիսուսէ աւելի տարիներու սովորութիւնը նուիրագործած էր այս բնակարանը. այդ սովորութիւնն ալ առ ոչինչ գրեցին: Կայսերական Քէրմանին մէջ իսկ բացայայտ տրամադրութիւն կար յայտն մասին. ան ալ մէկ կողմ դրուեցաւ: Նմանեցան այն պաշտակին որ իր հայրը իր տնէն կը վաճառէ փողոց կը նետէ: Եւ այս նուիրական բնակարանին իրենք տիրեցին. քանի մը աշխարհական միայն. և քանի մը ըմբռնտ երիտասարդներ հոն պանդխտ դրին, որոնք ամէն օրէնքի հակա-

գակ, մինչև իսկ նամակները վար կը դնեն կը բանան... Յիշեցէք Արիստովոյնը։

Ահաւասիկ այս գլխաւոր և ընդհանուր երեք գլուխներու վերածած է Սրբազան Քահանայապետը այս ըմբոստ Կաթողիկէից ծանր յանցանքները։ Մի քանին ալ քիչ մը վար իբր միջանկեալ պիտի յիշէ, ինչպէս պիտի տեսնենք։ Այնուհետեւ կը խօսի այն միջոցներուն վրայ, որոնք կը յուսացուէր ըստ ինքեան որ պիտի կարենային արգելուլ գիրենք այս յանցաւորտ արշաւանաց մէջ և չկրցան արգելել։

(Շարունակելի)



ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԵՒ ՄԱՇՏՈՑ

Կաթողիկոսական հետեւեալ Պաշտօնագիրը հաղորդուած է Աւագ Թեմի և չրջակայից բոլոր ժողովրդապետներուն ու քահանաներուն ինչպէս նաև Կաթողիկոսական Աթոռէն ուղղակի կախումն ունեցող Փախանորդութեանց Առաջնորդներուն, իսկ Թեմաճան կախկալութեան մի մի օրինակ ղրկուեցաւ ի գիտութիւն։ Շրջաբերական գրոյն կարեւորութեան բերմամբ ի ստորեւ կը հրատարակեմք զայն։

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՔ

ԳԵՐԱՊԱՏԻԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ ԱԻԱԳ ԹԵՄԻՍ

Կ. ՊՈԼՍԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈՒԱՆՈՐԴՈՒԹԵԱՆՑ

Մեր հովուական պարտականութիւններէն մին ալ, ինչպէս Ձեզ ծանօթ է, Աստուածային պաշտամանց նուիրական արարողութեանց առաջին խնամքով հսկելն է, որպէս զի այդ Սրբազան արարողութիւնք միշտ և հանապազ և ամենուրեք այնպէս մը կատարուին որ իրենց կանոնաւորութեամբ և միակերպ կիրառութեամբ, թէ՛ Աստուծոյ աւելի հաճոյական և թէ՛ բարեպաշտ հաւատացելոց ջերմեանդութիւնը ևս առաւել արծարծելու ազգակ մը հանդիսանան։

Աւելորդ չըլլար հոս յիշելն Ձեզ, Պատուական Եղբարք, թէ ինչպէս Աստուած Մովսէսի ձեռք հրամայած նուիրական արարողութեանց ամենաճիշդ և անվթար գործադրութիւնը կը պահանջէր հին օրինաց քահանաներէն ամենածանր պատիմներ սպառնալով, իրօք ալ անոնց ենթարկելով զանցառուները, որքան եւս առաւել նոյնպիսի կանոնաւորութիւն և միակերպութիւն չի պիտի պահանջէ նոր օրինաց քահանաներէն որոնց

ձեռքը կատարուած աստուածային պաշտամունք այլևս ըսկ ասուերնք
չեն՝ այլ անոնցմէ նշանակուած ամենասուրբ իբրականութիւնք, և քանզի
այդ սրբազան արարողութեանց մէջ իբր ամենէն գերազանցը առաջին
տեղին ունի Սուրբ Պատարագի զոհն և տնոր սունչութիւն ունեցող եկե-
ղեցական արազան արարողութիւնք, աստի կը հետեւի թէ քահանայք
ամէն խղճմտութեամբ պարտին հետեւիլ պաշտօնական պատարագամա-
տոյցի խորագրի մը որ ամէն տեղ կանոնը ըլլայ ամենեցուն միակերպու-
թեան: Որով և պէտք է գտնուի Եկեղեցական իշխանութենէ վաւերաց-
ուած պաշտօնական Պատարագամատոյց մը որ ըլլայ քահանայից ամենե-
ցուն կանոն միաձեւութեան և միակերպութեան:

Եւ ահա այս պատճառիս համար մեր Աստուածաբեալ Նախորդե-
րէն Անտօն Պետրոս Թ. Բարեկիշատակ Հասուն Կարգինալի ջանիւք ի լոյս
ընծայուած է ի Վիեննա ապեալ Պատարագամատոյց մի որ նոյն ժամա-
նակէ սկսեալ Մեր այս Աւագ թեմին մէջ ի կիրառութեան է, ինչպէս նաև
այս պատրիարքութեան՝ զրեթէ ամէն վիճակաց մէջ. իրաւ է թէ սոյն
Պատարագամատոյցն յինքեան չի կրեր քացարձակ և որոշ հրաման մը
ընդ ծանու պարտաւորող, որպէս զի իւրաքանչիւրն ի քահանայից լստ
այնմ և ոչ այլազգ ընթանայ, յորմէ յառաջ եկած են դժբաղդաբար
ի պաշտաման Սուրբ Պատարագի կատարուած արարողութեանց այն ան-
պատեհ վանազանութիւնք և տարբերութիւնք որոնք նոյն իսկ Հաւա-
սացելոց ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրելով այս մասին իրաւացի
դանգատանայ, հնար է գտնէ թեթև ինչ գայթակղութեանց առիթ
տուած են և դեռ կուտան, իրողութիւն մը որուն դուք իսկ անձամբ
կրնաք վկայել:

Արդ այդպիսի անպատեհութեանց դարման մը ընելու նպատակաւ
և որպէս զի Աւագ թեմիս համայն Եկեղեցիներու մէջ ինչպէս նաև Կա-
թոլիկոսական Աթոռէն ուղղակի կախում ունենող բոլոր Կաթոլիկոսա-
կան փոխանորդութեանց մէջ միշտ և անփոփոխ միակերպութեամբ
Սուրբ Պատարագը մատուցուի, պարտք անհրաժեշտ դատեցանք առաջի
Աստուծոյ ներկայ չըջաբերականուա ծանուցանել ինչպէս նաև զարգիս կը
ծանուցանեմք և կը հրամայեմք Մեր Պատուական Եղբարց քահանայից
իւրաքանչիւրին՝ որ այս Աւագ թեմիս մէջ Պատարագ պիտի մատուցա-
նեն թէ՛ աշխարհիկ թէ՛ վանական կղերէն, որ իւրաքանչիւրն ալ կը
պարտաւորին ի խղճէ և ընդ մեղօք գործադրել կէտ առ կէտ այն ամէն
որ վերոյիշեալ պատարագամատոյցին մէջ պարունակուած խորագրիւք կը
հրամայեն:

Եւ որովհետեւ Եկեղեցւոյ միւս խորհրդոց մատակարարութեան և
սու հասարակ արարողականներու կատարման մէջ ալ անհրաժեշտ է պա-
հել միեւնոյն միաձեւութիւնը և ճշդութիւնը, անոր համար նոյնպէս Մեր
Աւագ թեմին բոլոր Ժողովրդապետաց և համօրէն՝ Քահանայից, ինչպէս

նաև Կաթողիկոսական Փոխանորդաց իրր ի խղճէ և ընդ մեղօք պարտա-
ւորիչ կը հրամայենք մի միայն Մեր Երջանկայիշատակ Նախորդ Անուօն
Պետրոս Թ. Հասուն Կարգինալէն Վիեննա տպուած Մաշտոցին գործա-
ծութիւնը՝ ի մատակարարութեան Ս. Խորհրդոց և Խորհրդականաց և
պարզ օրհնութեանց ու ծիսից։

Ի վերջոյ սիրոյ հաւաստեօք եմք

Գեորգ. Տեառնդ

Աղօթարար

Ստգր. ՊՅՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ—ՊԱՏՐԻԱՐԷ ՏԱՆՆ ԿԵԼԵԿԻՈՅ

Կ. Պոլիս 1 Յունիս (Ն. Տ.) 1912

ԱՅԼԵԻԱՅԼԷ

Զինասանի մեջ Կաթողիկոսիւն։ Վերջին քառասուն տարուան
միջոցին մէջ Կաթողիկէութիւնը Զինու մէջ կարեւոր յառաջդիմութիւն-
ներ րբաւ։ Թաւին 1869 հոն կային կէս միլիոն Կաթողիկէայք, 618 մի-
սթոնարներ, և 329 չինացի քահանայք։ Իսկ 1909ին Կաթողիկէից թիւը
բարձրացաւ մէկ միլիոն երկու հարիւր հազարէ աւելի։ Միսիոնարներն
էին թուով 1379, և տեղացի քահանայք՝ 631։ Որով քառասուն տար-
ուան ժամանակամիջոցի մը մէջ հաւաստացեալք աւելցած են եօթը հար-
իւր հազար։

Աւստրոյ մայրաքաղաքին քաղաքագետիւնը։ Վիեննայի վախ-
ճանեալ քաղաքագետը Լուէկէր, որ երկար տարիներ պատնէջի վրայ
կեցած էր տնտեսի ընդդէմ սոցալաւարաց և միշտ յաղթական շանդի-
սացած էր Կաթողիկէ գաւառի պաշտպանութեանը մէջ։ Քրիստոնէայ կու-
սակցութիւն մը կաղմած էր, որ իր վաղաճաւ մահաւամբը ընդկանարար
ծանր չարուած մը ընդունած էր իր գործունէութեան մէջ։ Թշնամիք,
բողոքականք, հրեայք և որմնադիրք, իրենց ոյժերը միացուցած և մահ
սպառնացած էին այդ կուսակցութեան, ջախջախիչ մեծամտանդութեամբ։

Սակայն վերջերս ի գերեւ ելան իրենց ակնկալութիւնները։ Անմահ
Լուէկէրի անպարտելի ոգին և հիմնադրած ճամարիս Կաթողիկէի իմաս-
տուն կաղմակերպութիւնը նոր հրաշքներ կը գործէին։ Լուէկէր կը յաղ-
թանակէր գերեզմանէն ալ անդին։ Հակառակ ոտիներու միահամուռ
գործունէութեան, Քրիստոնէայ կուսակցութիւնը Կաթողիկէից մի անգամ
եւս յաղթական կ'ելլէր զարհուրելի պայքարէն, պարտելով և զգեսանելով
հակառակորդ սոցալաւարաց ջոկը։ Վիեննայի թաղապետական աւագ
ժողովը 165 անդամներուն 131ը Քրիստոնէայ կուսակցութեան կը պատ-
կանի։ 20 ազատականք, 10 ընկերվարականներ, ու 3 անստոյգ։

Այսպիսի իմաստութեամբ պարտաւորուած և խոհեմ համբերատարութեամբ կատարուած ընտրական գործերն, որոյ մէջ անշուշտ աշխատութեամբ կը ճգնին եկեղեցական և աշխարհական անձնանուէր մարդիկ՝ ուղիղ սկզբունքներով սիրաշահելու համար մանաւանդ ժողովրդային աղէտ դատարարելը, պէտք է լարի օրինակ լլկան ամէն երկիրներու, ուր անաւոր ապագայ մը պատրաստելով կը գործէ՝ անխիղճ միջոցներով, անկրօնութիւնն և ուղանդաւորութիւնը, ամէն պոյնով ու ամէն տեսակ կեղծաւորութեամբ։ Վիէննայի Կաթողիկէից այս փայլուն յաղթանակը անանող ուղղամիտ Բրիտանացիք ոչ ուրեք և ոչ երբեք պարտասելու են, յուսահատելու են՝ ճշմարտութեան վերջնական յաղթութենէն։ զի Վիեննա ուղիղ քրիստոնէական զգացումներու զարգացման և յառաջդիմութեան ամէնէն անընդունակ և ամուլ գետինը պէտք էր ըլլար եթէ ինկատի առնուի թէ հոն տիրապետած է առակալի կերպով հրէական տարրը, և նորա հետ փարմասօնութիւնը, հոն խորտրմատ հաստատուած է հրէական մամոնայի դրամատուններուն կոճակը՝ սինագոգ, այնպիսի որ Վիեննա քաղաքը փոխաբերաբար կը կոչուի նոր Երուսաղէմ։ Բաւական եղած է մի երկաթեայ կամք, աջակցելով իրեն բազմաթիւ և հզօր կոորդիք, յաջողցնելու համար այնպիսի բան մը, զոր և լոկ մտածեն իսկ յիմարութիւն պիտի համարուէր ի սկզբան անդ։

Այսպէս ահա մարդ մանկէն վերջը անգամայն հաւաքալիւնը կը ծախէ անմուանալիւ ԼՈՒԷԿԷՐ, առաքալուի Կաթողիկէն։

Վենետիկ քաղաքին նորակառոյց զանգակատանը օրհնութիւնը կատարուեցաւ պատմական քաղաքին ամենամեծ խանդավառութեան մէջ։ Սրբազան Քահանայապետը՝ որ այնքան քաղցր յիշատակներ պահած է իւր սիրելի Վենետիկէն, այս մեծ արարողութեան մասնաւոր սիրով վերաբերուեցաւ, ինք իսկ տալով օրհնութեան նոր ծխական ձեւ մը, և ինքնագիր նամակ մ'ուղղելով Վենետիկի Պատրիարք ծիրանաւոր Գաբրիէլին, ի հայրական գթառատ զգացումներով ժողովրդեան համար։

Այս զանգակատունը, որ գեղարուեստ կերտուած մըն էր և կը համբէր շուրջ երկաստանեակ դարեր, առա տարի առաջ յունիսթ 14 Յուլիս 1902ին Վենետիկոս ծերունիի մը պէս կը կքէր ինք իր վրայ իր տարիներուն ծանրութեանը տակ, առանց մէկու մը վնաս հասցնելու։ Ոգեսպառ հեծութեամբ մը, ի սուգ համակելով տիեզերաց շնաշխարհիկ Քաղաքը, Ագրիականի Դշխոյն և զինք պատրդ գեղամիժաղ ծովածոց լճակին ալեակները։ Վերածուելով փրատակաց կոյսի մը Ս. Մարկոսի անդուգական հրապարակին մէկ անկիւնը, Տօթերու մուսէոնական Պալատան դէմը։ Ամբողջ աշխարհ զգաց ան ատեն այս հրաշակերտին կորըստեան ցաւը, և ամէն կողմանէ փութացին նպաստներ տեղացնելու, արքայաբար, և ահա այսօր Արուեստը կանգնեց միեւնոյն գետնի վրայ հինին ճիշդ նման գեղեցիկ բուրգը, ի յաւէթական յիշատակ, որու գա-

գաթէն պիտի հնչէ ցանգ կրօնական շեշտերու հնադարեան եղանակաւորումը, թրթռացնելով միջնորդան ու հաւատացեալներու սիրտը, ի փառաբանութիւն Ամենակալին :

ԱՐՅԻ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԳԵՐԱՊԱՅԾԱՌԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Զատիկան ցնծերգի օրերուն, ժողովրդային ոգեւորութիւններու մէջ ծովացած սրտերը, տակաւին նոր թօթափած իրենց ձմրան տխուր վերարկուն, գարունի ջինջ օդով մը տօնեցին Զատիկը :

Սիրուած, պաշտուած այդ Յարութեան աօնը, Ռարբերդի Հայ Կաթողիկէ համայնքին համար տարբեր ազդեցութիւն մը ունեցաւ, Այդ երջանիկ Զատիկը՝ ամենէն չափեկան օրերէն մին եղաւ. մանաւանդ այն պարագային՝ յորում արեւին յառաջողոյս ճառագայթներուն նման աւերակալուած հեռագիրը հաղորդեց Արշի. Վիճակաւորին Սամսոնէն մեկնումը, և շատերուն արտերը անդալադաւ խորատուցեց անբայատրելի հեշտանքներու մէջ :

Անձամբեր էր սպասումը, ամէնուն սրտերը սիրալիւ համակրանքով կը բարտխէր, որովհետեւ երկար բացակայութենէ և հոգեմաշ տաղաւեկներէ վերջ՝ դարձեալ համայնքը Արշի. Իսրայէլեանի ներկայութիւնը պիտի վայելէր, կրկին արշալուստ ճառագայթներուն նման սիրով հոգիներու մէջ պիտի արծարծուէր :

Նոր ամար՝ Ապրիլի 22ն էր, ամէն ոք պահ մը իր կիրակնօրեայ վայելումներէն դադրած՝ կը պարտադրուէր գործի ու աշխատանքի դռները բանալ, միւս կողմանէ մերթ լուռ ու խորհրդաւոր երեւակայութիւններով կ'սպասուէր վաղահաս աւետարներին :

Ամբողջ օրը տեւեց միեւնոյն երազանքը, և անա՛ դարունի առատաշուք արեւը, մայրամուտի միաս թարովը առած պահուն, վերջին բերկրաւորի հեռագիրը արծուային սուր թախով մը, Նփրատի գլղացող ափերուն վրայէն և ձիւնապատ սարերու զազաթներէն արձալանցեց Նորին Սրբութեան Մեկիտինէն մեկնումը և յաջորդ օրուան կանուխ ժամանումը :

Ընդհուպ Նախ. Ժոխ. Գեր. Ներսէս Վ. Պաղտիկեան, առանց մատաբերելու տիրող սեւազգիստ աղջամուղջը, մի քանի բնկերներով և կուռաւարական ոտականով մեկնեցաւ, գիշերի լուռ անսարաններու մէջէն դէպ ի չորս ժամ հեռաւորութեամբ «Ռանգիւղ» թրքաբնակ աւանը, սպասցնելու Նորին Սրբաւնութիւնը, որպէսզի համայնքին տենջանքները ապարդիւն չմնային, որուն կանոնաւորութեան մասին Ժոխ. վարդապետէն բնաւ ջանք խնայուած չէր, և նախապէս շրջակայ բոլոր գիւ-

զերուն հաղորդուած ու մեծ բազմութեամբ եկած էին դիմաւորութեան վայրը :

Առաւօտանձն՝ ուրկէ այդք հազիւ կ'ստիտակէր սեւաթուր ծառերու ետեւ , օձապտոյտ պողոտաներու վրայէն կառքերու շարք մը կը դիմէր վերոյիշեալ փառնը , որոնց կ'ընկերանային նաեւ խումբ մը ձիաւոր երիտասարդներ , բոլորը ուրախ ու ծիծաղկոտ և կամովին կ'երթային սիրոյ և հնազանդութեան սուրբ տաճարին առջեւ խոնարհելու :

Օտար և Կաթողիկէ համայնքի նշանաւոր անձնաւորութիւններու խումբն բազմութիւն մը կը ծովանար պանդոկին մէջ , անժոյժ ամբոխ մը սողանցուէր ճամբուն երկու կողմերը , և ահա այդ սպառումի վայրկեաններուն Արհի . Գերապայծառը երեւցաւ հեռուէն և բոցավառեց ներկաներու տաք զգացումները :

Նորին Սրբութիւնը պահ մը հանգստի համար ընդհուպ պատեհաւ սիրուեցաւ Ֆրանսայի , Ասորի Կաթ . հայրերէ և բազմաթիւ անձնաւորութիւններէ , և Պիոս Ժ . Քաճառայապետի՝ ակնկալուած օրհնութիւնը ներկաներուն առատապէս ձօնեց :

Հակառակ այսքան խրախճանութիւններու , յանկարծ Երկինքը դէզադէզ ամպեր չըջապատեցին . ամբողջ միջնորդութեամբ մնաց չըջադգեստ մը հաղուեցաւ , ու քիչ վերը Արհի . Վիճակաւորին հետ ունեցանք նաեւ անձրեւային տարախ մը , որուն համար իտարերդցին երկար ժամանակ անձկանօք կ'սպասէր :

Երեք ժամ անցնելէստ միեւնոյն օդով կառքերը սրարչաւ յառաջան , երբ քաղաք ժամանեցին , եկեղեցւոյ զանգակը բարձրագոտ սկսաւ զօղանջել , և Արհի . Վիճակաւորը Հայրապետական տարազով առաջնորդուեցաւ երկսեւ աշակերտներու թափորով դէպի լուսազարդուած խորան , հոն լռիկ մնչիկ մտածակսնէ մը և համառօտ բանախօսութենէ մը վերջ՝ բոլոր ներկաները օրհնեց , ապա միեւնոյն թափորով վերադարձաւ Առաջնորդարան , ուր՝ հոն բազմութեան մը ներկայութեան՝ սղալոց վարժարանին կողմանէ՝ բարի գալստեան ճառ մը արտասանուեցաւ , երբեակ ծախահարութիւններու ընդմիջով :

Աննկարագրելի էր ամէնուն ոգեւորութիւնը , անսպառ էր վառ զգացումներու անշէջ հուրը , քանի որ , այդ թէ կին , երիտասարդ թէ պատանի՝ անհասնում ժպիտներու մէջ կը լուային :

Յարգանք ազգային և հայրենի՝ վեհ դիւցազներուն . . . յարգանք՝ կրօնի սկզբունքներուն համար՝ անսայթաք պայքարով խիզախ մարտիկներուն :

ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Յունիս 7/20, Հինգշաբթի օր, Կէս օրէ վերջը ըստ սովորութեան բարոյական Առաքանութեան խնդիրներու վիճարկութեան համար թեմական քահանայից համախմբումը տեղի ունեցաւ, ընդ նախագահութեամբ Ամենապ. Հոգեւոր Տեսաւն Ներկայ էին Արհի. փոխանորդ Արքեպս. և թէ՛ աշխարհիկ թէ՛ փոնական կղերէն բազմաթիւ եկեղեցականներ:

* Ամենապ. Հոգեւոր Տէրը վերջեւ կրկին շրջաբերականներ հանեց: Առաջինով իւր Աւագ թեմին մէջ պարտաւորիչ կ'ընէ երջանկ. իւր նախորդ Անտոն Պետրոս թ. Հատուկ Կարգինաբն ի լինենա ապել տուած Պատարագամատոյցին յետոյ ճշդիւ գործադրութիւնը իսկ երկրորդով կ'արգելու «Մէծառաի Ախպար» թերթին ընթերցումը, որ իրեն սկզբունք ըրած է շարունակ հոգեւոր իշխանութեան դէմ մտքաւոր Այս երկրորդին պատճենը առաջիկայ թիւով պիտի հրատարակենք:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Յունիս 20ին Բեդերագուրկի գործակալութիւնը կը հեռապրէ. — «Զարը հանդիսաւորապէս ունկնդրութեան ընդունեց Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Քէրէկ Սուրենեանցը, և անոր առաւ վեղարի ակումակաւ խաչ՝ Կաթողիկոսը ապա ընդունուեցաւ Կաթողիկոսին կողմէ: — Ռուսիա Հրատարակող Մեակ թերթի քառասնամեայ յարեւելը մեծ շքով հրատարակէ է Կաթողի 26ին և 27ին Առ այս նշանակելի է մանաւանդ լշարածնայ և Սոյ Կաթողի կրօններուն շնորհաւորական կոնգրակները թերթին հիմնադրին ու խմբագրական մարմնոյն:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Կը հաւատառի թէ Եմտական նախարարութիւնը մէկ միջին սակի փոխառութիւն մը ըրած է Պսմ. Դրամատունէն 7,15 առ հարիւր տոկոսով: — Վիեննայէ եկած հեռագիր մը կ'ըսէ թէ Անգլիա կուսակից է միջազգային դեսպանախորհրդի մը գումարման, և թէ՛ առ այդ Բ. Դրան և Խտայից ևս դիմում ըրած է որ անոնք ալ ընդունին: — Մարաշի միւթէսարըք Նահիտ պէյ վարչական անկարողութեան պատճառաւ պաշտօնանկ եղաւ և անոր տեղ ուրիշ մէկը անուանուեցաւ, և կայս. իրատէ մը վաւերացուց այս անուանումը, կ'ըսէ Թէրեմլան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Ա. Գրիգոր Լուսաւորիչ	321
Ա. Քահանայապետի նամակը	326
Խորհրդատեւ Սարգս	330
Ալեւալի	332
Արհի. Խաչիկեան Նալսկոպոս	334
Տեղեկագրական	336

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՐԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՄԱՏԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Կաթողիկոս նահատի Նո. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան
պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ
նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյգ ամէն յուրերն՝ համառոտ-
ուած . որով եւ մեծ գիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիտել . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արսասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Ռոսույ եւ
կամ մէյ մէկ դրեւոց նամակադրոշմով :

Մ'էկ թիւ 1 Դանեկան



Նամակ . յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.
ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcate Catholique

Pera

Constantinople

ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ
հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած ըլլան թուրքիւն մէկ
կողմը միայն:

5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկատարուին: